18 ապրիլի 2025թ. Թիվ 041-570

ԵՐԱՇԽԻՔ ԹԻՎ 20 45 40 441633/134

1. Սույն երաշխիքը, ինչպես նաև սույն երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում են ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից թիվ «ՀՀ ԱՄ-ԲՄԱՇՁԲ-25/01» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին «ՇԻՆՄԱՍՏԵՐ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) մասնակցելուց բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 25.260.000 (քսանհինգ միլիոն երկու հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից մինչև Բենեֆիցիարի կողմից թիվ «ՀՀ ԱՄ-ԲՄԱՇՁԲ-25/01» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով Պրինցիպալի կողմից հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մեկ հարյուր քսան աշխատանքային օր, սակայն ոչ ուշ, քան 21 հոկտեմբերի 2025թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, Երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ anahitpoghosyan98@yandex.com էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը և երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

Digitally signed by
BADALYAN RAFAEL 2907640046
Date: 2025-04-20 22:20:22

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ | "ACBA BANK" OJSC
«Արմենիա» մասնաճյուղ
"Armenia" Branch
+374 10 31 88 88
acba@acba.am
www.acba.am
ՀՀ, Երևան, 0010, Վ. Սարգսյան 10, 123-124
123-124, 10 V. Sargsyan st., Yerevan, 0010, RA

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Արմենիա» մասնաճյուղի կառավարիչ **Էմիլ Հարությունյան**

Կատարող՝
Էմմա Սահակյան
Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 4162)